«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական
կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա._____
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., ավագ դասախոս Զարիկյան Կ.Բ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Վարչական դատավարություն

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

1. Ներածություն

«Վարչական դատավարության իրավունք» դասընթացն ուսումնասիրում է մասնավոր իրավունքի սուբյեկտների և հանրային իշխանության մարմինների միջև առաջացող այն վեճերը, որոնք ծագում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների ապահովմանն և պարտականությունների կատարմանն ուղղված՝ օրենքով սահմանված վարչական լիազորությունների իրագործման շրջանակում։

«Վարչական դատավարության իրավունք» դասընթացի նպատակն է ապահովել ուսանողների կողմից վարչական դատավարական իրավունքի տեսության հիմնական դրույթների, վարչական դատավարական օրենսդրությունում օգտագործվող հիմնական հասկացությունների, ինչպես նաև մասնավոր իրավունքի սուբյեկտների և վարչական մարմինների միջև ծագող վարչական իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված կառուցակարգերի վերաբերյալ համալիր գիտելիքների յուրացումն։

Դասընթացի նպատակը՝ ուսանողների կողմից խորացված գիտելիքների ստացումը վարչական վեճերի լուծման առանձնահատկությունների մասին, ինչպես նաև տվյալ ոլորտում գործնական գիտելիքների և հմտությունների զարգացում։

Դասընթացի խնդիրները՝

- Ուսանողների մոտ փրավորել հստակ և համապարփակ պատկերացում վարչական վեճերի վերաբերյալ, իրենց խնդիրների և զարգացման տենդենցների վերաբերյալ.
- Ակտերի բողոքարկման ժամանակ անձի իրավունքերի վերաբերման գիտելիքների ընդլայնում և բողոքարկում.
- Վարչական վեճերի քննման ընթացակարգի և առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքենրի ընդլայոնում.
- Վարչական դատավարության ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց և դատարանի իրավունքների և պարտականությունների մասին գիտելիքների ընդլայնում

Դասընթացի օբյեկտը և առարկան։

«Վարչական դատավարության իրավունք» դասընթացի ուսումնասիրության օբյեկտ հանդիսանում է վարչական օրենսդրությունը և վարչական իրավահարաբերությունը կարգավորող վեճերը։

«Վարչական իրավունք» դասընթացի առարկան՝ վարչական դատավարության իրավունքի սուբյեկների միջև առաջացող իրավահարաբերությունների

հիմնախնդիրներն են:

Դասընթացի մուտքային պահանջները:

«Վարչական դատավարության իրավունք» դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ իրավագիտությունից, պետության և իրավունքի տեսությունից, սահմանադրական իրավունքից, ինչպես նաև հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրող առարկաներից։

2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

գիտելիքի կիրառման հմտությունները՝

- Որոշել վարչադատավարական ոլորտում իրավական խնդիրների էությունը.
- Կողմնորոշվել վարչադատավարական իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում.
- Ներկայացնել սեփական իրավական դիրքորոշում՝ հիմնվելով նորմատիվ իրավական ակտերի և դատական պրակտիկայի վրա.

կարողանա՝

ընդհանրական իմացական հմտությունները՝

- Գործնականում կիրառել ձեռք բերված գիտելիքները.
- Կատարել վիճահարույց իրավիճակների իրավական վերլուծություն։

ունակ լինի՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

- Ինքնուրույն յուրացնել նորմատիվ իրավական ակտերը և դատական պրակտիկան.
- Վերլուծել վարչական դատավարության իրավունքի աղբյուրներ հանդիսացող նորմատիվ իրավական ակտերը.
- Կատարել վարչադատավարական ոլորտում տարբեր իրավական երևույթների համեմատական վերլուծություն.
- Կարողանալ աշխատել վարչադատավարական ոլորտում շրջանառվող իրավական փաստաթղթերի հետ:

Դասավանդման եղանակները և մեթոդները:

«Վարչական դատավարության իրավունք» դասընթացն անցկացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Գործնական պարապմունքների նպատակն է օգնել ուսանողներին ուսումնասիրել դասընթացի կարևորագույն խնդիրները, խորացնել և համակարգել ուսանողների գիտելիքները տվյալ ոլորտում:

«Վարչական դատավարության իրավունք» դասընթացն ուսումնասիրելիս կարևոր դեր է խաղում ուսանողների ինքնուրույն աշխատանքը:

«Վարչական իրավունք» դասընթացի ընթացքում կիրառվում են բացատրական, տեղեկատվական, գործնական, վերարտադրողական, համեմատական, հետազոտման և մասնակի որոնման մեթոդները:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	72
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	32
1.1.1.Դասախոսություններ	16
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	16
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	40
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	Ստուգարք

2.3. Առարկայի ծավալը՝ 72 ժամ, կրեդիտ՝ «2» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Բաժին 1. Վարչական դատավարության հասկացությունը Թեմա 1. Վարչական դատավարության ընդհանուր բնութագիրը և գործառույթները	2	1	1
Թեմա 2. Վարչական դատավարության համակարգը	2	1	1
Թեմա 3. Վարչական դատավարության փոխհարաբերությունները այլ տեսակի դատավարությունների հետ	2	1	1
Բաժին 2. Վարչական դատավարության սկզբունքների առանձնահատկությունները Թեմա 1. Իկվիզիցիոն սկզբունքը Վարչական դատավարությունում	2	1	1
Թեմա 2. Մրցակցության սկզբունքի առանձնահակտությունը վարչական դատավարությունում	2	1	1
Բաժին 3. Վարչական վարույթի էտապները Թեմա 1. Վարչական վարույթի ընդհանուր նկարագրություն	2	1	1

Թեմա 2. Փուլեր	4	2	2
Թեմա 3. Ենթափուլեր	6	4	2
Բաժին 4. Հատուկ իրավական մեխանիզմները վարչական դատավարությունում Թեմա 1. Հատուկ սուբյեկտներ	6	3	3
Թեմա 2. Հատուկ վարույթներ	4	2	2
Ընդամենը	32	16	16

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

ՄՈԴՈՒԼ 1

Բաժին 1. Վարչական դատավարության հասկացությունը

Թեմա 1. Վարչական դատավարության ընդհանուր բնութագիրը և գործառույթները

Վարչական վեճեր. Ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքը. Վարչական մարմինների ակտերի վերահսկողությունը հակակշիռների և փոխզսպումների համակարգում:

Թեմա 2. Վարչական դատավարության համակարգը

Վարչական դատավարության ինստիտուցիոնալ համակարգը: Վարչական դատավարության ֆունկցիոնալ համակարգը: Վարչական դատավարության վարութային համակարգը:

Թեմա 3. Վարչական դատավարության փոխհարաբերությունները այլ տեսակի դատավարությունների հետ

Վարչական և սահմանադրական դատավարությունների նմանություններն ու տարբերությունները: Վարչական և քրեական դատավարությունների նմանություններն ու տարբերությունները: Վարչական և քաղաքացիական դատավարությունների նմանություններն ու տարբերությունները:

Բաժին 2. Վարչական դատավարության սկզբունքների առանձնահատկությունները

Թեմա 1. Իկվիզիցիոն սկզբունքը վարչական դատավարությունում

Ինկվիցիզոն սկզբունքը կամ գործի ի պաշտոնե քննումը (ex officio): Հարցերի քննության «ի պաշտոնե» քննության իրավունքը: Գործերի փաստերի ի պաշտոնե վերհանում:

Թեմա 2. Մրցակցության սկզբունքի առանձնահակտությունը վարչական դատավարությունում

Հավասարության իրավունք, մրցակցություն և հանրային շահ, մրցակցություն և ինկվիզիցիոն վարույթ

Բաժին 3. Վարչական վարույթի փուլերը

Թեմա 1. Վարչական վարույթի ընդհանուր նկարագրություն

Վարչական վարույթը բոլոր ինստանցիաներում՝ գործի հարուցումին մինչև վերջնական որոշման ընդունումը:

Թեմա 2. Փուլեր

Առաջին ատյանում վարչաիրավական վեճի քննման կարգը, վերաքննիչ ատյանում վարչաիրավական վեճի քննման կարգը, Վճռաբեկ ատյանում վարչաիրավական վեճի քննման կարգը:

Թեմա 3. Ենթափուլեր

Գործի հարուցում, գործի ըստ էության քննում, գործի ավարտ, դատական ակտերի հարկադիր կատարում:

Բաժին 4. Հատուկ իրավական մեխանիզմները վարչական դատավարությունում

Թեմա 1. Հատուկ սուբյեկտներ

Վարչական մաչմիններ, պետական և մունիցիպալ հիմնարկներ, պաշտոնատար անձինք, օմբուդսմեն, հատուկ կարգավիճակ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Թեմա 2. Հատուկ վարույթներ

Օպերատիվ որոշումներ պահանջող իրավիճակներ: Դատարան դիմող հատուկ սուբյեկտները, բողոքարկման ենթակա ակտերի հատուկ տեսակները, Դասական դատական վերահսկողությունից տարբերվող իրավիճակներ:

4. Գրականության ցանկ

Հիմնական գրականություն՝

1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք, Հ. Թովմասյան, Օ. Լուխթերհանդթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմերս, Ռ. Ռուբել- Եր.: Բավիղ, 2011, 424 էջ:
2. Административное судопроизводство: Практикум: Учебное пособие / Под ред. В.В. Яркова, К.А. Малюшина. – М.: Статут, 2016.
3. Ноздрачев А.Ф. Административное судопроизводство как формирующийся институт административного права // Административное судопроизводство в Российской
4. Федерации: развитие теории и формирование административно-процессуального законодательства. Сер.: Юбилеи, конференции, форумы. Вып. 7. Воронеж: Изд-во Воронежского государственного университета, 2013.
5. Административное судопроизводство. Учебник / Треушников Михаил Константинович. Городец. 2017.
6. Административное судопроизводство : учебник / Н. В. Алексеева, А. А. Арифуллин, С. Т Багыллы [и др.] ; под ред. С. В. Никитина. - Москва : РГУП, 2018.
7. Кононов П.И. Административное судопроизводство как структурная часть административного процесса // Административное право и процесс. 2015. № 11
8. Административное право и процесс: полный курс / Ю.А.Тихомиров. – М.: Изд-во г-на Ти- хомирова Ю.А., 2001. С. 572.
9. Administrative Law: Cases and Materials. Ronald A. Cass, Colin S. Diver, Jack M. Beermann. Aspen Law & Business, 1998 - 1295
10. Administrative Law. Alfred C. Aman (Jr.), William T. Mayton. West Academic Publishing, 2014 – 861.
11. Administrative Law. John M. Rogers, Michael P. Healy, Ronald J. Krotoszynski, Kent Barnett. Wolters Kluwer, 31 հնվ, 2021 թ. – 906.
12. Administrative Law. Timothy Endicott. Oxford University Press, 2021 - 728

Էլեկտրոնային ռեսուրս՝

1. https://www.arlis.am/
2. http://www.concourt.am/
3. https://www.court.am/
4. https://www.datalex.am/

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

Հարցաշար՝

1. Վարչական արդարադատության հասկացությունը և հատկանիշները
2. Վարչական արդարադատության գործառույթները
3. Վարչական դատավարությունը և դատավարության մյուս տեսակները
4. Վարչական դատավարության սկզբունքների ընդհանուր բնութագիրը
5. Ի պաշտոնե քննությունը վարչական դատավարությունում
6. Մրցակցության սկզբունքը վարչական դատավարությունում
7. Վարչական դատավարության փուլերը
8. Դատարան դիմելու իրավունքը և դրա իրացման նախապայմանները
9. Դատարան դիմելու իրավունք ունեցող հատուկ սուբյեկտները
10. Վարչական հայց հարուցելու նախապայմանները
11. Հայցատեսակները վարչական դատավարությունում
12. Վիճարկման հայցը
13. Պարտավորեցման հայցը
14. Գործողության կատարման հայցը
15. Ճանաչման հայցը
16. Հայցադիմումին ներկայացվող ձևական պահանջները
17. Հայցադիմումի ընդունելության փուլում ընդունվող դատական ակտերը
18. Ժամանակավոր պաշտպանության միջանկյալ միջոցները վարչական դատավարությունում
19. Գործը դատաքննությանը նախապատրաստելու փուլը
20. Գործի դատաքննությունը
21. Գրավոր քննությունը վարչական դատավարությունում
22. Գործի վարույթը կասեցնելու հիմքերը
23. Գործի վարույթը կարճելու հիմքերը

24. Գործի քննության եզրափակիչ փուլը և վեճն ըստ էության լուծող դատական ակտին ներկայացվող պահանջները
25. Վերաքննությունը վարչական դատավարությունում
26. Վճռաբեկ ատյանի առանձնահատկությունները վարչական դատավարությունում
27. Հատուկ վարույթները վարչական դատավարությունում
28. Վեճն ըստ էության լուծող դատական ակտերի հարկադիր կատարման փուլը՝ որպես դատավարության մաս

6. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելիքերի արդյունքում: